

Հրանտ Օհանյան

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ԶԱՄԲՈԸ» ՈՐՊԵՍ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԱՂԱՔՈՒՐ

Բանալի բառեր – Ս. Էջմիածին, Գանձասար, Սիմեոն Ա Երևանցի, սկզբնաղբյուր, կաթողիկոսություններ, հակաթոռ կաթողիկոսներ, պարսկական տիրապետություն:

Հայոց ընդհանրական աթոռի՝ Ս. Էջմիածնի, և մյուս կաթողիկոսական աթոռների՝ Աղվանից (Գանձասարի), Աղթամարի և Սսի (Կիլիկիո) փոխհարաբերությունների ուսումնասիրման անգնահատելի սկզբնաղբյուր է Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (ծն. 1710, կաթողիկոս՝ 1763-1780) «Զամբռ»¹ աշխատությունը:

Սիմեոն Երևանցին մանրամասնորեն անդրադարձել է Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսական աթոռների փոխհարաբերություններին՝ օգտագործելով ինչպես հայ մատենագրության հայտնի ներկայացուցիչների գործերը, այնպես էլ հայերեն և պարսկերեն բազմաթիվ վավերագրեր: Դրանցով հեղինակը ցանկացել է հիմնավորել պատմական այս կամ այն եղելության ճշմարտացիությունը: Սիմեոն Երևանցու հաղորդած տեղեկությունները հավաստի են և մեծամասամբ հաստատվում են այլ աղբյուրներով ու Մատենադարանում պահվող Կաթողիկոսական դիվանի և պարսկերեն վավերագրերով:

Սիմեոն Ա կաթողիկոսը վարել է ակտիվ գործունեություն՝ ելակետ ընդունելով մյուս աթոռների նկատմամբ Էջմիածնի հայրապետական աթոռի գերազահությունը ամրապնդելու համոզմունքը: Ահա այս տեսանկյունից «Զամբռի» համապատասխան գլուխներում նա անդրադարձել է մյուս կաթողիկոսությունների պատմությանը՝ հետագա ուսումնասիրողների համար դառնալով բացառիկ սկզբնաղբյուր, նաև Մաղաթիա Օրմանյանի՝ Հայ եկեղեցու պատմությանը նվիրված կոթողային աշխատության համար²:

Նշենք, որ կաթողիկոսությունների միջև փոխհարաբերությունների խնդիրը շատ ժամանակ հոգևոր ոլորտից տեղափոխվել է քաղաքական հարաբերությունների ոլորտ, ինչը բնական է, եթե հաշվի առնենք օտար իշխողների տիրապետությունը և հայ ժողովրդի մասնատվածությունը: Զննվող ժամանակաշրջանում

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. հմր. 978, նաև՝ Զամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնակից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ եւ շարագրեցեալ ի Սիմեօնի...կաթողիկոսէ Երեւանցոյ, Վաղարշապատ, 1873 (այսուհետև՝ Զամբռ):

² Տե՛ս Մաղաթիա արք. Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցիոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ, Բ հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Երևան, 2001 (այսուհետև՝ Մաղաթիա արք. Օրմանեան, Ազգապատում):

Արևելյան Հայաստանը՝ նաև Արցախը և հայաբնակ այլ շրջաններ գտնվում էին պարսկական տիրապետության տակ: Արևելյան Հայաստանի հոգևոր թեմերը և երկու կաթողիկոսությունները գտնվում էին պարսկական տարբեր խանությունների տարածքներում և աթոռների միջև պայթարը հրահրվում էր պարսկական խանությունների կողմից:

Այս հանգամանքներից ելնելով՝ Սիմեոն Երևանցին ամեն կերպ ձգտել է ամրապնդել Էջմիածնի գերագահությունը հայ հոգևոր կյանքում: Առաջնային կարևորություն է տալիս Գանձասարի (Աղվանից) կաթողիկոսությանը: Այն, ըստ հեղինակի, թեև հիմնվել էր դեռևս Գրիգոր Լուսավորչի օրոք, բայց Աղվանից կաթողիկոսները, որոնց նա կոչում էր «Լուսավորչի փոխանորդ Կաթողիկոսաց որդի և թոռ», պետք է օծվեին և կաթողիկոսական կարգ ստանային Էջմիածնի կաթողիկոսների կողմից:

Աղվանից կաթողիկոսությանը վերաբերող դեպքերի շարադրանքը հեղինակը սկսել է հնագույն ժամանակներից և առաքյալների գործունեության նկարագրությամբ՝ Արցախում քրիստոնեության տարածումը ներկայացնելով Թադևոս առաքյալի աշակերտներից մեկի՝ Եղիշե եպիսկոպոսի գործունեությամբ, իսկ կաթողիկոսության հիմնադրումը՝ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի հետ: Պետք է նշել, որ Սիմեոն Երևանցու հաղորդումները հիմնականում վերցված են Ագաթանգեղոսի երկից, իսկ ավելի ուշ շրջանի Աղվանից կաթողիկոսության պատմությունը հեղինակը գրել է ձեռքի տակ ունենալով նախորդ շրջանի հայ պատմիչների՝ Մովսես Կաղանկատվացու¹, Անանիա Մոկացու², Ստեփանոս Տարոնեցու³, Կիրակոս Գանձակեցու⁴ և Ստեփանոս Օրբելյանի⁵ երկերը: Ընդարձակ մեջբերումներ կատարելով այդ հեղինակների գործերից՝ նա մանրամասնում է Աղվանից կաթողիկոսության պատմությունը՝ նպատակ ունենալով հիմնավորել այն, որ «վկայութեանց մինչև ցայս վայր ուսաք՝ թէ Կաթողիկոսքն Աղուանից հնագանդք են լեալք Լուսավորչի փոխանորդ Կաթողիկոսացն ի բնէ անտի, և ի նոցանէ են առեալ զօծումըն՝ զպատինս Կաթողիկոսական, և բանիցս ձեռագիր են տուեալ Կաթողիկոսօք, եպիսկոպոսօք, և իշխանօք, զի մի՛ ևս հեստիցին, և զյեպիսկոպոսաց ձեռնադրեալ Կաթողիկոսն մի՛ ընդունիցին՝ եթէ ո՛չ իցէ հրամանաւ Լուսավորչի փոխանորդացն»⁶:

Կաթողիկոսական աթոռը Էջմիածնում վերահաստատելուց (1441 թ.) հետո ընկած պատմական ժամանակաշրջանը մինչև Մովսես Սյունեցի կաթողիկոսի աթո-

¹ Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Երևան, 2011, էջ 338-345:

² Տե՛ս Անանիա Մոկացի, Տեռն Անանիայի Հայոց կաթողիկոս յաղագս պատմութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքնոյ Սուրբ Լուսավորչի աթոռոյն, Մատենագիրք Հայոց, Ժ հատոր, Ժ դար, Երևան, 2011, էջ 256-274:

³ Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական Պատմութիւն, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Երևան, 2011, էջ 690 և այլն:

⁴ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 192-201:

⁵ Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 200-210:

⁶ Ջամբռ, էջ 75:

ռակալությունը՝ 1629 թ., նա համարում է Էջմիածնի համար խառնակ մի ժամանակաշրջան¹: Սիմեոն Երևանցին այս հանգամանքով է պայմանավորում Աղվանից գործերի «բացիթողի» վիճակը:

Աղվանից կաթողիկոսության հետ փոխհարաբերությունների վերաբերյալ Սիմեոն Երևանցու հաղորդումները 17 դ. առաջին կեսից ավելի մանրամասն են դառնում: Պետք է նշել, որ եթե Էջմիածնում իրադրությունը կայունանում է, ապա Աղվանից կաթողիկոսության վիճակը շարունակում է մնալ անկայուն. միայն 17 դ. առաջին կեսին հիշատակվում են մի շարք կաթողիկոսներ՝ նաև հակաթոռ²: Քննվող ժամանակաշրջանում 1633 թ. Էջմիածնի կաթողիկոս է դառնում Փիլիպոս Աղբակեցին (1633-1655), իսկ Աղվանից՝ Գրիգոր Յասան-Ջալալյանը (1634-1653), որի աթոռակալումը հաստատվում է պարսից Շահ Սեֆիի (1629-1642) հրովարտակով³: Պետք է նշել նաև, որ շահի հրովարտակով սահմանվում էին Գանձասարի կաթողիկոսի իրավունքները Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Շամախիի և Չարուզբիլի⁴ նկատմամբ: Սիմեոն Երևանցու հաղորդմամբ՝ Փիլիպոս կաթողիկոսը իր ընտրվելուց հետո նախ թուղթ է ուղարկում Գանձասար՝ հայտնելով իր ընտրության մասին և հրավիրելով Գանձասարի կաթողիկոսին մյուռոն ստանալու, ապա պատասխան չստանալով, և տեղեկանալով Գանձասարի աթոռի շուրջ պայքարի մասին՝ կաթողիկոսի ընտրության վերաբերյալ 10 կետից բաղկացած «զկանօնական» հրահանգ է ուղարկում Արցախ և պատվիրում, որ արժանավոր թեկնածու ընտրելու դեպքում վերջինս «ըստ կանօնի և ըստ սովորութեան նախնեացն» գա Ս. Աթոռ և ստանա կաթողիկոսի օծումը և «զԿաթուղիկոսունս Էջմիածնի իբրև զպապ և զհայր գիտել, և զԿաթուղիկոսունս իւրենաց իբրև թոռն և զորդի նորին»⁵: Կաթողիկոսը նշում է, որ այս հրահանգի համաձայն Էլ Գանձասարի կաթողիկոս է ընտրվում Գրիգոր Յասան-Ջալալյանը: Ուշագրավ է, որ 1634 թ.-ին «ժողովուրդքն Խաչենու և բոլոր վիճակքն Աղուանից» դիմում են պարսից Շահ Սեֆիին՝ հայտնելով, թե իրենք «ի բնե» հանդիսացել են Էջմիածնի վիճակներ և չեն ցանկանում ենթարկվել Գանձասարի կաթողիկոսին և շահը բավարարում է նրանց խնդրանքը⁶: Ս. Երևանցու այս հաղորդումը կարիք ունի ճշգրտման, քանի որ եթե հավատանք այս վկայությանը, ապա ստացվում է հակասություն՝ նախ Էջմիածնի կամքով ընտրվում է Գանձասարի կաթողիկոսը, ապա ընտրությունից անմիջապես հետո Արցախի թեմերի ժողովուրդը ցանկանում է «կրկին» ենթարկվել Էջմիածնին:

¹ Ջամբո, էջ 78:

² Մկրտումյան Լ. Ա., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006, էջ 58-59:

³ Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Յրովարտակներ, պրակ երկրորդ (1601-1750 թթ.), կազմեց՝ Յ. Դ. Փափազյանը, Երևան, 1959, էջ 110, վավ. 23 (այսուհետև՝ ՄՊԿ, պրակ երկրորդ):

⁴ Շար գավառը, տե՛ս Չոբանյան Պ., Զարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 20, Երևան, 2001, էջ 204-232:

⁵ Ջամբո, էջ 79:

⁶ Նույն տեղում:

Այս հարցին անդրադարձած հեղինակները¹ հիմնվում են «Ջամբոյ» հաղորդած այս տեղեկության վրա և հղում կատարելով Մատենադարանում պահվող արխիվային վավերագրի վրա՝ նշում են, որ «Աղվանից կաթողիկոսությունը այնքան էր թուլացած», որ Աղբակեցուն հաջողվեց ձեռք բերել նրա տիրույթները²: Նշենք որ Մատենադարանում պահվող տվյալ վավերագիրը³ Շահ Սեֆիի հրովարտակն է, որը վերաբերում է բացառապես Քաջաթաղի շրջանի հայ բնակչությանը Էջմիածնին ենթարկելուն⁴, իսկ արխիվային վավերագրի վրա առկա են Սիմեոն Երևանցու կատարած գրառումները, որոնք էլ, ըստ երևույթին, առաջացրել են այս շփոթը: Առավել ևս դժվար թե Փիլիպոս կաթողիկոսը իր «հրահանգով» Գանձասարի կաթողիկոս կարգված անձից խլեր նրա թեմերը՝ այն էլ շահի հրովարտակով: Կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակաշրջանում պայթար է գնացել երկու կաթողիկոսությունների միջև և, ըստ երևույթին, մինչև Էջմիածնի կողմից կաթողիկոս ճանաչվելը լուրջ հակասություններ են եղել Գրիգոր Յասան-Ջալալյանի հետ, որի հետևանքով էլ Էջմիածնին հաջողվել է շահական հրովարտակով իրեն ենթարկել Քաջաթաղի թեմը:

Այդպիսով, հարկ է նշել, որ թեև Էջմիածնին ճանաչել է Գրիգոր Յասան-Ջալալյանին որպես Աղվանից կաթողիկոս, այնուհանդերձ Փիլիպոս Աղբակեցուն նախ հաջողվել է ձեռք բերել Քաջաթաղը, որը դարձել է Էջմիածնի թեմերից մեկը⁵, ապա, ինչպես երևում է, պայթարը երկու կաթողիկոսությունների միջև շարունակվել է, որի հետևանքով էլ Էջմիածնին հաջողվում է 1650 թ.-ին Շահ Աբաս Բ-ից (1642-1667) ստանալ հրովարտակ, որով Շամախու և Շիրվանի թեմը ևս անցնում է Էջմիածնին⁶, ինչը մշտական վեճեր է հարուցում երկու աթոռների միջև:

Ինչպես երևում է, նշված ժամանակաշրջանում լարված էր իրավիճակը նաև Աղվանից կաթողիկոսության ներսում: Գրիգոր Դ-ի դեմ հանդես էին գալիս անգամ Գանձասարի վանքի միաբանները՝ առաջ քաշելով Պետրոս Եպիսկոպոսի⁷ թեկնածությունը: Ուսումնասիրողների կարծիքով հենց այս երկպառակտչական պայթարով էր պայմանավորված Գրիգոր Յասան-Ջալալյանի դիմումը պարսից Շահ Աբբաս Բ-ին և 1652 թ.-ին վերջինիս արձակած հրովարտակը, որով պետք է ամրապնդվեին Գրիգոր կաթողիկոսի դիրքերը⁸: Այս հանգամանքը ևս կարևորելով, նշենք, որ այս հրովարտակը Եական դեր ուներ Էջմիածնի-Գանձասար փոխհարաբերությունների համատեքստում, քանի որ ըստ դրա Շահ Աբբաս Բ-ն ոչ միայն վերահաստատում է Գրիգոր Դ-ի իրավունքները, այլև փաստորեն կրկին Գանձա-

¹ Մակար Եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Բ. Յատոր, Թիֆլիս, 1907, էջ 65: Մկրտումյան Լ.Ա., նշվ. աշխ., էջ 59:

² Տե՛ս Մկրտումյան Լ. Ա., նշվ. աշխ., էջ 59:

³ Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 57:

⁴ Տե՛ս ՄՊՎ, պրակ երկրորդ, էջ 109, վավ. 22:

⁵ Տե՛ս ՄՄ ձեռ. հմր. 9120, թ. 1ա-5բ: Քաջաթաղը Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից 1766 թ. կազմած Էջմիածնի թեմերի ցանկում է:

⁶ Տե՛ս ՄՊՎ, պրակ երկրորդ էջ 147, վավ. 42:

⁷ «Տեր Պետրոս Խանձկեցի», ՄՄ ձեռ. հմր. 2561, թ. 263ա, Մաղայան Ա., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, № 3, էջ 270:

⁸ Տե՛ս Մկրտումյան Լ. Ա., նշվ. աշխ., էջ 60:

սարին Է վերադարձնում Շիրվանի թեմը¹: Պետրոս Խանձբեցին (1653-1675) ամեն կերպ փորձում է հաշտվել Էջմիածնի հետ: Այդ նպատակով արդեն Ամենայն հայոց կաթողիկոս Յակոբ Ջուղայեցու (1655-1680) օրոք գնում է Էջմիածին և ըստ կարգի ձեռնադրվում է ու օծվում²: Երկու աթոռների հարաբերությունների մերձացումը շարունակվել է հաջորդ տարիներին: Չաքարիա Ագուլեցին վկայում է, որ ինքը ներկա է եղել 1672 թ.-ին Էջմիածնում կազմակերպված արարողությանը, որի ժամանակ Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը մյուռոնի հանդիսավոր օրհնության ժամանակ Գանձասարի Պետրոս կաթողիկոսին իշխանության գավազան է տվել³: Յարկ է նշել, որ դրանից հետո՝ 1663 թ.-ին Շահ Աբաս Բ-ի հրովարտակով Պետրոսը հաստատվում է Գանձակի, Ղարաբաղի և Շիրվանի հայության կաթողիկոս⁴: Այդպիսով, կարծես կարգավորվում են երկու կաթողիկոսությունների միջև փոխհարաբերությունները՝ մինչև Պետրոս Դ-ի մահը: Այս խաղաղությունը նպաստում է, որ «հաստատեցան յամենայն տեղիս եկեղեցիք, վանօրայք եւ անապատք. մանաւանդ սուրբ Աթոռն Էջմիածնի, եւ սուրբն Գանձասար յԱղուանս»⁵:

Ըստ հեղինակի հաղորդումների՝ Պետրոս Դ-ի մահից հետո՝ 1675 թ., ոմն Սիմեոն⁶ «ինքնընծայ և անձնահաճ լրբութեամբ թարց հրամանի Տեառն Յակովբայ, և մանաւանդ թողլով զԱթոռն Գանձասար, ժողովեալ զինչս և զարդինսս աթոռոյն ի գեղն իւր՝ և անդ նստի յենլով ի յայլազգ իշխօղ գեղչն իւրոյ»⁷: Ինչի համար էլ, ըստ Երևանցու, կաթողիկոսը Էջմիածին է կանչում Յասան-Ջալալյան տոհմից Երեմիա արեղային, նրան տալիս է եպիսկոպոսի կոչում և ձեռնադրում կաթողիկոս: Ինչպես երևում է, Սիմեոն Երևանցու այս հաղորդումները կարևոր լրացում են ժամանակաշրջանի Աղվանից կաթողիկոսության համար մղվող պայքարի համատեքստում:

Պետք է նշել, որ այս իրադարձություններից հետո երկփեղկվում է ոչ միայն Արցախի հոգևորականությունը, այլև երկու կաթողիկոսներից յուրաքանչյուրին սկսում են աջակցել հայության որոշակի զանգվածներ, թեպետ 1675 թ.-ին պարսից Շահ Սուլեյմանը (1666-1694) իր հրովարտակով կաթողիկոս է ճանաչել Երեմիային՝ նրան վերապահելով Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի և Շամախու թեմերը⁸: Ինչպես երևում է դեպքերի հետագա զարգացումից, շահի այս հրովարտակը չի լուծում առկա հակասությունները և, ինչպես նշում է Սիմեոն Երևանցին, Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը «ո՛չ սակաւ ջանայ և համոզէ ի խաղաղութիւն»⁹: Արդյունքում՝ Սիմեոն Խոտորաշենցին պարտավորագիր է ստորագրում առ այն, որ ինքը «լռեսցի ի Կաթուղիկոսական գործոց», այսինքն ճանաչում է Երեմիա Յասան-

¹ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ երրորդ (1672-1731 թթ.), կազմեց՝ Զ. Պ. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 28, վավ. 1 (այսուհետև՝ ՄՊՎ, պրակ երրորդ):

² Տե՛ս Սակար եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 65:

³ Տե՛ս Չաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 108:

⁴ Տե՛ս ՄՊՎ, պրակ երրորդ, էջ 48 վավ. 14:

⁵ Եսայի Յասան-Ջալալեան, Պատմութիւն համառօտ Աղուակից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 11-12:

⁶ Սիմեոն Խոտորաշենցին է, «Տէր Սիմեօն շնորհալիր Ջարաբերթօւ», ՄՄ ձեռ. հմր. 2561, թ. 263ա, Մաղալյան, Ա., նշվ. աշխ., էջ 271:

⁷ Ջամբռ, էջ 80:

⁸ Տե՛ս ՄՊՎ, պրակ երրորդ, էջ 103, վավ. 43:

⁹ Ջամբռ, էջ 80:

Ջալալյանի կաթողիկոսությունը և պարտավորվում է, որ իր ազգականներից ոչ մեկին չի կարգի կաթողիկոս¹: Հայտնի են նաև այս համաձայնության այլ պայմաններ, որ, փոխարենը, Սիմեոն Խոտորաշենցին կիշխի Շիրվանում, Շաքիում և Գանձակում²: Ինչպես երևում է, այս համաձայնությամբ Գանձասարի կաթողիկոսությունը ակնհայտորեն երկփեղկվել է, ինչի վերաբերյալ Սիմեոն Երևանցին ցավով նշում է, որ այդ ամենի պատճառը այն է, որ «ազգականք Կաթուղիկոսացն յառաջադրեն զինքեանս ի Կաթուղիկոսութիւն որպես զհայրենի ժառանգութիւն համարելով իւրեանց», ինչը և հանգեցրել է երկատման և խռովության ժողովրդի մեջ: Ինչպես երևում է Սիմեոն Երևանցու հաղորդումներից, անգամ այս համաձայնությունը չի վերացրել հակասությունները երկու կողմերի միջև և «ոչ վերջանայ վեճ և կռիւն տոցա»³:

Հատկանշական է, որ Հակոբ Ջուղայեցու մահից հետո երկու կաթողիկոսների միջև հակասությունները բորբոքվում են Էջմիածնի Եղիազար Ա Այնթափցի (1681-1691) կաթողիկոսի օրոք: Ըստ «Ջամբռի» Եղիազար կաթողիկոսը հերթական անգամ փորձ է արել հաշտեցնել երկու կաթողիկոսներին՝ այդ նպատակով կանչելով Նրանց Էջմիածին և կարգադրելով, որ «զի ի միասին նստիցին ի յաթոռն Գանձասար, զՄեռօն և զԵպիսկոպոս ի միասին ձեռադրեսցեն»⁴: Հաշտեցման այս փորձի ձախողման մասին վկայում է այն փաստը, որ նախ 1691 թ.-ի փետրվարին Արցախի մելիքները և Եպիսկոպոսները համախոսական են գրում Եղիազար կաթողիկոսին, որում հայտարարում են, որ Աղվանից կաթողիկոս են ճանաչում միայն Երեմիային⁵, իսկ Սիմեոն Խոտորաշենցին Ջրաբերդում կառուցում և 1691 թ.-ին օծում է Երից Մանկանց վանքը՝ այն դարձնելով իր աթոռանիստը⁶: Հարկ է նշել, որ Մատենադարանում պահպանվել է պարսից Շահ Սուլթան Յուսեյնի (1694–1722) 1699/1700 թթ. թվագրվող հրովարտակը, որով Երեմիա Հասան-Ջալալյանին հաջողվել է մահվանից առաջ շահի կողմից հաստատել իր կաթողիկոսական իրավունքները Գանձասարի աթոռի նկատմամբ⁷: Ընդհուպ մինչև երկու կաթողիկոսների մահը (1700 թ.-ին մահանում է Երեմիա Հասան-Ջալալյանը, իսկ հաջորդ տարի՝ Սիմեոն Խոտորաշենցին) Նրանք շարունակում են մնալ «հակառակք միմեանց և աղմկեալ երկրօքն»⁸:

Այսպիսով, եթե նախորդ շրջանում Աղվանից կաթողիկոսների հետ միաժամակ հանդես էին գալիս հակաթոռ կաթողիկոսներ և պայթար էր գնում Նրանց միջև Գանձասարի աթոռի համար, ապա այժմ սկիզբ է դրվում Գանձասարի աթոռի պառակտմանը. միաժամանակ հանդես եկող երկու կաթողիկոսներն էլ սկսում են իշխել յուրաքանչյուրը իր նստավայրից՝ ունենալով աջակիցներ ինչպես տեղի հայ մելիքներից, այնպես էլ մահմեդական խաներից: Աղվանից կաթողիկոսությունում

¹ Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 1:

² Տե՛ս Մկրտումյան Լ. Ա., նշվ. աշխ, էջ 72:

³ Ջամբռ, էջ 80:

⁴ Լույն տեղում:

⁵ Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 2:

⁶ Տե՛ս Մկրտումյան Լ. Ա., նշվ. աշխ, էջ 73:

⁷ Տե՛ս ՄԴՎ, պրակ երրորդ, էջ 142, վավ. 61:

⁸ Ջամբռ, էջ 81:

հաստատվում են երկու ուժեղ ու հակամարտ կաթողիկոսներ, որոնք ոչ միայն պառակտում են տեղի հայությանը, այլև յուրաքանչյուրն իրեն նշանակում է պառապակից՝ «Ժառանգական» դարձնելով երկպառակտությունը: Էջմիածնի հետ Գանձասարի կաթողիկոսների հակամարտությունը թևակոխում է նոր փուլ. սկսում են փնտրել Էջմիածնի կաթողիկոսների աջակցությունը ընդդեմ իրենց հակաթոռ կաթողիկոսի:

Ամենայն հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեսացու (1691-1705) մահից հետո Էջմիածնի աթոռը տևական ժամանակ թափուր էր: Այդ ժամանակ Գանձասարի կաթողիկոսն էր Եսայի Զասան-Ջալալյանը (1700-1728), որի իշխանությունը հաստատել էր պարսից Շահ Սուլթան Յուսեյնը՝ 1701 թ.-ի իր հրովարտակով¹, իսկ Էջմիածնի և Գանձասարի միջև մշտական կռվախնձոր հանդիսացող Շիրվանի և հարակից թեմերի պատկանելիությունը վերապահվել էր Գանձասարին: Զարկ է նշել, որ շահի հրովարտակի արդյունքում փաստի առջև կանգնած Նահապետ կաթողիկոսը 1703 թ. հանդես է գալիս ուղերձով, որով փաստորեն ճանաչում է այդ թեմերի պատկանելիությունը Գանձասարի կաթողիկոսությանը², իսկ պարսից շահը իր մեկ այլ հրովարտակով հրահանգում է պաշտոնյաներին «օգնել» Եսայի կաթողիկոսին՝ գանձելու եկեղեցու հարկեր³:

Մեզ հայտնի է, որ հարաբերական անդորրը երկու կաթողիկոսությունների փոխհարաբերություններում կրկին խախտվում է 1705 թ., երբ ըստ Սիմեոն Երևանցու, Ներսես անունով հոգևորականը⁴ «կաշառքով և խաբեությամբ» օժվում է Գանձասարի կաթողիկոս: Սիմեոն Երևանիցն ցավով նշում է, որ «սա եհաս յաւուրս մեր, որ և զգլուխս մեր թէ ո՛րքան ցաւեցուցման եղև պատճառ»⁵ և շարունակում է՝ «ի կենդանութեան Եսայեայ օժանի, երկրորդ թարց հաւանութեան երկրին և հրամանի Էջմիածնի Կաթողիկոսացն ինքնագլուխ. Երրորդ զի ի ներքոյ նզովից և դատապարտութեան գոլով»: Զասկանալի է, որ այս մեղադրանքներից գլխավորը այն էր, որ Ներսեսը ինքնագլուխ էր հռչակվել կաթողիկոս, այսինքն առանց Էջմիածնի հավանության:

Յետաբերական է, որ այս խառնակ իրադրությանը վերջ տալու նպատակով Էջմիածնի Ալեքսանդր Ա Ջուղայեցի (1706-14) կաթողիկոսը Գանձասարի հակաթոռ կաթողիկոսներին կանչում է Էջմիածին և քննելով այս գործը՝ հայտարարում է, որ Ներսեսը մեղավոր է, կարգալույծ է անում նրան և բանադրում: Այս դեպքերը, ըստ Սիմեոն Երևանցու, տեղի են ունեցել 1707 թ.⁶: Սակայն ակնհայտ էր, որ Արցախի որոշ հոգևորականներ և իշխանավորներ բացահայտորեն աջակցում էին Ներսես հակաթոռ կաթողիկոսին, ինչի մասին ևս նշում է Ս. Երևանցին: Ալեքսանդր կաթողիկոսը ստիպված էր 1708 թ. հանդես գալ կոնդակով, որով կրկին

¹ Տե՛ս ՄՊՎ, պրակ երրորդ, էջ 149, վավ. 65:

² Տե՛ս Ջամբռ, էջ 81:

³ Տե՛ս ՄՊՎ, պրակ երրորդ, էջ 146, վավ. 63:

⁴ «Տէր Ներսես մեղապարտ, յետին թշուռառացեալ», ՄՄ ձեռ. հմր. 2561, թ. 263ա, Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 271:

⁵ Ջամբռ, էջ 82:

⁶ Տե՛ս Ջամբռ, էջ 82:

բանադրում է Ներսեսին¹: Նույն թվականին Ալեքսանդր կաթողիկոսը, ցանկանալով ամրապնդել Էջմիածնի կողմից կաթողիկոս հաստատված Եսայի Յասան-Ջալալյանի դիրքերը՝ որոշում է նրա ենթակայությանը վերադարձնել Շամախու, Շիրվանի և շրջակա տարածքները, որոնք դեռևս Շահ Աբաս Բ-ի 1650 թ. հրովարտակով ենթակա էին Էջմիածնին², սակայն պարբերաբար ձեռքից ձեռք էին անցնում: Յետաբերական է, որ անգամ այս իրավիճակում արդեն 1712 թ. Գանձասարից դժգոհ հայ ազգաբնակչությունը համախոսականով որոշում է վերադառնալ Էջմիածնի ենթակայության ներքո³: Պարսից շահը Ալեքսանդր Ջուղատցու դիմումի հիման վրա հատուկ հրովարտակով 1712 թ. վերադարձնում է Շիրվանի և Շամախու թեմը Էջմիածնին⁴:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Էջմիածնի ձեռնարկումները՝ ասպարեզից հեռացնել Ներսես ինքնակոչ կաթողիկոսին և ամրապնդել Էջմիածնի կողմից ճանաչված Եսայի կաթողիկոսին որևէ էական արդյունք չեն տվել: Այդ պառակտված վիճակը շարունակվել է Աստվածատուր Ա Յամադանցու (1715-1725) օրոք, երբ կրկին բորբոքվում է պայթարը Շիրվանի և Շամախու թեմերի համար: Սիմեոն Երևանցին նշում է, որ երբ գահ է բարձրանում Աստվածատուր կաթողիկոսը, Եսային չի ներկայանում նրան, որը և բարկանալով «վերստին տերունի առնէ զՇամախի, զՇիրվան, զՇաքի, և զշրջակայս սոցա»⁵: Եթե հավատանք այս վկայությանը, ապա հեղինակի հաղորդումների մեջ այստեղ ակնհայտ հակասություն է առաջանում, քանի որ, ինչպես նշվեց, 1712 թ.-ից Շիրվանի թեմը Էջմիածնի ենթակայության տակ էր և թե ինչ հանգամանքներում է թեմը հետագայում կրկին անցել Գանձասարին՝ փաստորեն հայտնի չէ: Ինչպես տեսնում ենք, կրկին հակասություններ են բորբոքվում երկու հոգևոր կենտրոնների միջև: Ստեղծված իրադրությունից այլ ելք չգտնելով՝ առավել ևս, որ պարսկական պետությունը գտնվում էր անկայուն վիճակում, Եսայի կաթողիկոսը որոշում է վերջնականապես հարթել Էջմիածնի հետ խնդիրները՝ փորձելով լուծել նաև Գանձասարի աթոռի դրամական միջոցների պակասության խնդիրը⁶, և 1719 թ. անձամբ գալիս է Էջմիածին և ընդունում Ամենայն Յայոց կաթողիկոսական աթոռի գերագահությունը, Աստվածատուր կաթողիկոսը նրան է վերադարձնում Շամախին և շրջակա թեմերը⁷:

«Ճանուցանելով նոցա զկանօսս ի սրբոյն Գրիգորէ անտի, թե՛ Աղուանից Կաթողիկոսքն որպէս թոռն և որդի հնազանդ են լեալ Լուսաւորչի փոխանորդացն, և նոքա ևս զնոսա որպէս զորդի ի խնամս են պահեալ՝ և օգնական են լեալ յամենայնի. իսկ երբեմն եթէ ոմանք ապստամբք են գտանեցեալք ի դոցանէ զմենչ, մեք ևս զխնամս մեր ենք բարձեալ ի դոցանէ»⁸: «Ձամբռի» այս հաղորդումը կարևոր է այնքանով, որ նշված փաստից հետևում է, որ Շիրվանի, Շամախու և շրջակա թե-

¹ Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 39:

² Տե՛ս ՄԴՎ, պրակ երկրորդ, էջ 147, վավ. 42:

³ Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 3:

⁴ Տե՛ս ՄԴՎ, պրակ երրորդ, էջ 176, վավ. 82:

⁵ Ձամբռ, էջ 83:

⁶ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, երրորդ հատոր, Երևան, 1973, էջ 115:

⁷ Տե՛ս Ձամբռ, էջ 84:

⁸ Նույն տեղում:

մերը պարբերաբար բողոքել են Գանձասարի իշխանությունից և ցանկություն հայտնել ենթարկվելու Էջմիածնին: Միայն այդպես կարելի է բացատրել այն, որ նշված տարածքները պարբերաբար անցել են մի կաթողիկոսությունից մյուսին:

Պետք է նշել, որ Էջմիածնի կողմից Գանձասարի կաթողիկոսության նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը պայմանավորված էր նաև քաղաքական իրողություններով: Պարսկական պետությունը 1720-ական թթ. հայտնվել էր դժվարին իրավիճակում՝ Արևելքից ծանր հարվածներ ստանալով աֆղաններից, հյուսիսից հաճախակի էին դարձել լեզգիների և այլ լեռնականների հարձակումները, իսկ Օսմանյան կայսրությունը և Ռուսաստանը ձգտում էին օգտվել այդ իրավիճակից և գրավել պարսկական հարուստ շրջանները: Մ. Օրմանյանի դիպուկ բնորոշմամբ՝ «տագնապալից կը դառնար Չայերուն կացութիւնն ալ Էջմիածնի եւ Աղուանից կաթողիկոսական վիճակներուն մէջ հաւասարապէս»¹: Կենտրոնական իշխանության թուլացման պայմաններում պարսից պաշտոնյաները դարձել էին «կաշառակեր, կեղեքիչ, կողոպտող, անարդարադատ, զրկող և անիրագործ»²: Փաստորեն նման պայմաններում դժվարին իրավիճակում էր հայտնվել Գանձասարի կաթողիկոսությունը, և Էջմիածնի կաթողիկոսները վերջիններիս թուլացնելու խնդիր այլևս չունեին, ընդհակառակը, ինչպես նշվեց, ձգտում էին աջակցել՝ Գանձասարի աթոռը իրենց ենթակայության տակ պահելով: Մ. Օրմանյանը նշում է, որ այդ խառը ժամանակաշրջանում Եսայի կաթողիկոսը թողել է Գանձասարը և հեռացել լեռնային շրջաններ³:

Չարցի ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է դառնում 1728 թ.՝ Եսայի կաթողիկոսի մահից հետո կրկին իրեն հիշեցրած Ներսես հակաթոռ կաթողիկոսի գործունեությունը: Այժմ երկու կաթողիկոսությունների փոխհարաբերությունները պայմանավորված էին առավելապես տարածաշրջանի քաղաքական իրավիճակով: Գանձակում հաստատված թուրքական իշխանությունները աջակցում են Ներսես Ջրաբերդցուն՝ նրան ճանաչելով կաթողիկոս: Սիմեոն Երևանցու հաղորդմամբ՝ Էջմիածնի հաջորդ կաթողիկոսները՝ Կարապետ Բ Ուլնեցին (1726-1729), Աբրահամ Բ Խոշաբեցին (1730-1734) և Աբրահամ Գ Կրետացին (1734-1737), ըստ երևույթին, նկատի ունենալով տվյալ քաղաքական իրողությունը, ընդունել են Ներսեսի կաթողիկոսությունը: Նա անգամ այցելել է Էջմիածին՝ ընդունելով Էջմիածնի կաթողիկոսների գերագահությունը և պահպանելով իր աթոռը:

«Ջամբոխ» հաղորդումները դեպքերի հետագա զարգացումների վերաբերյալ կապված են Ներսես Ջրաբերդցու և նրա եղբոր թոռան՝ Իսրայելի օծման հետ որպես Գանձասարի կաթողիկոս⁴: Պետք է նշել, որ մինչ այդ Ներսես Ջրաբերդցին, որ հայտնվել էր դժվարին իրավիճակում՝ Արցախում տիրող երկպառակալական կռիվների պատճառով անցել է Գանձակ, որտեղ և ապրել է մինչև իր մահը⁵: Քանի որ Սիմեոն Երևանցին «Ջամբոռում» որևէ այլ տեղեկություն չի հաղորդում երկու

¹ Մաղաթիա արք. Օրմանեան, Ազգապատում, էջ 3260:

² Տե՛ս Մակար եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 78:

³ Տե՛ս Մաղաթիա արք. Օրմանեան, Ազգապատում, էջ 3261:

⁴ Մաղաթիա արք. Օրմանեան, Ազգապատում, էջ 3528:

⁵ Տե՛ս Սկրտումյան Լ.Ա., նշվ. աշխ., էջ 141:

կաթողիկոսական աթոռների փոխհարաբերությունների վերաբերյալ մինչև Ներսեսի մահը՝ 1763 թ., ապա, հավանաբար, այդ տարիներին Գանձասարի կաթողիկոսությունը գտնվել է Էջմիածնի գերագահության ներքո և հակասություններ չեն եղել:

Այնուհանդերձ, մեզ հայտնի է, որ Հակոբ Շամախեցու՝ կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո՝ 1759 թ., Ներսեսը հերթական անգամ այցելում է Էջմիածին՝ վերահաստատելով իր հավատարմությունը տրված խոստումներին, սակայն դա նրան չի խանգարել կատարել մի քայլ, որը նրա մահից հետո կրկին սրելու էր Էջմիածնի հետ հարաբերությունները: Հավանական է, որ 1763 թ. հունվարին Ներսես կաթողիկոսը, Գանձակում հաստատված Արցախի մելիքների հորդորներով, կաթողիկոս է օծում իր ազգական Իսրայել Ջրաբերդցուն (1763-1808)՝ առանց Էջմիածնի համաձայնության: Հետաքրքիրն այն է, որ նորընծա կաթողիկոսին աջակցում էին ոչ միայն հայ մելիքները, այլև Գանձակի Շահվերդի խանը (1747-1761): Մեզ հայտնի է, որ Իսրայելը կաթողիկոս է ձեռնադրվել Ներսեսի կողմից, նրա կենդանության օրոք, իսկ ահա նրա մահից հետո նորընծա կաթողիկոսը և նրա համախոհները գրում են «գթուղթս աղերսանաց» Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցուն՝ «զի ընկալցի գԻսրայելն և գյանձնարարական և գպատուիրանական կոնդակս գրեսցէ յերկիրն Աղուանից ի յընդունիլ զնա»¹:

Զանի որ Սիմեոն Երևանցին կանգ է առնում այս փաստի վրա, ապա կարևոր է նաև նշել, որ Ղարաբաղի Իբրահիմ խանը, իր հերթին, 1763 թ. հրավիրում է մելիքների և բարձրաստիճան հոգևորականների ժողով, որը մերժում է Աղվանից կաթողիկոս ճանաչել Իսրայել Ջրաբերդցուն՝ պատճառաբանելով, որ Ներսես կաթողիկոսը պարտավոր էր իրենից հետո աթոռը հանձնել Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին: Հետևաբար, ժողովը կաթողիկոս է ընտրում Եսայի կաթողիկոսի եղբոր որդուն՝ Հովհաննես Եպիսկոպոսին²:

1763 թ. կաթողիկոս դարձած Սիմեոն Երևանցին շարունակել է իր նախորդի՝ Հակոբ Շամախեցու քաղաքականությունը և երկու կաթողիկոսների հարցում որևէ վերջնական որոշում չի կայացրել, քանի որ հակամարտող երկու կաթողիկոսներն էլ ձգտում էին ապացուցել իրենց իրավունքները և հավակնությունները ու այդպիսով Էջմիածնի միջոցով հաստատվել Աղվանից կաթողիկոսության գահին: Ըստ «Ջամբռի» հաղորդած տեղեկությունների՝ Սիմեոն Երևանցին Իսրայելի դիմումը ստանալուն պես հորդորում է նրան կարգի համաձայն գալ Էջմիածին և ներկայանալ իրեն՝ ըստ «նախնեացն կարգի»³, որը վերջինս չէր շտապում անել: Այս պայմաններում Հովհաննես Հասան-Ջալալյանի կողմնակիցները վերջինիս ձեռնադրում են կաթողիկոս, որը սկիզբ է դնում «մեծ կռիւ և երկփեռեկտումնս ի յերկիրն Աղուանից»⁴:

Պետք է նշել, որ այս ընթացքում ինչպես երկու կաթողիկոսները, այնպես էլ Գանձակի և Ղարաբաղի խաները շարունակել են գրություններ հղել Էջմիածին՝ ի

¹ Ջամբռ, էջ 87:

² Տե՛ս Ջամբռ, էջ 88:

³ Նույն տեղում, էջ 86:

⁴ Ջամբռ, էջ 88:

պաշտպանություն իրենց հովանավորած թեկնածուի¹: Ըստ Սիմեոն Երևանցու՝ «տևեաց այս կենամաշ խռովութիւնս յամս երիս»²: Երկու կաթողիկոսները շարունակել են կողմնակիցներ ձեռք բերել, իրենց հավատարիմ եպիսկոպոսներ օծել և այլն³:

Հայտնի է, որ Հովհաննես Հասան-Ջալալյանը 1765 թ. հոկտեմբերին ներկայանում է Սիմեոն Երևանցուն: Մինչդեռ Իսրայել Ջրաբերդցին, չցանկանալով ներկայանալ, Գանձակից նամակ է ուղարկում, թե «Կաթուղիկոս մի դու ես՝ Կաթուղիկոս մի սա, ընդէ՞ր պարտի սա ի յոտս քոյ գալ» և որ «այլ մի՛ ևս երկարացուցաներ և գրեր մեզ»⁴:

Արդյունքում, 1765 թ. դեկտեմբերի 25-ին Էջմիածնում գումարվում է եկեղեցական ժողով, որտեղ Հովհաննես Հասան-Ջալալյանը եկեղեցական հանդեսով Էջմիածնի կողմից փաստորեն ճանաչվում է Աղվանից կաթողիկոս: Սիմեոն Երևանցին պարտավորագիր է վերցնում Հասան-Ջալալյանից առ այն, որ նա ցմահ պետք է մնար Գանձասարում, այլ վայր չտեղափոխեր կաթողիկոսական աթոռը, չապստամբեր Էջմիածնի կաթողիկոսների դեմ և այլն⁵: Այնուհետև՝ նույն օրը՝ դեկտեմբերի 25-ին, կոնդակ է գրում՝ պատվիրելով ճանաչել Հովհաննեսին որպես կաթողիկոս, հնազանդ լինել եկեղեցական կանոններին⁶: Իսրայել Ջրաբերդցին այս դեպքերից հետո շարունակեց մնալ Գանձակում՝ բանադրված Էջմիածնի կողմից⁷:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ «Ջամբր» Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների պատմության ուսումնասիրության գլխավոր սկզբնաղբյուրներից մեկն է, որը պարունակում է մեծաքանակ փաստական նյութ, և որի հեղինակը սոսկ դեպքերի շարադրողը չէ, այլ վերջին շրջանում ակտիվ մասնակիցը՝ հարցի կարգավորման իր հստակ տեսլականով, որը կայանում էր երկու աթոռների միջև եղած ավանդական կարգը անփոփոխ պահելու և Ս. Էջմիածնի գերակա դիրքը հաստատելու մեջ:

Грант Оганян, «Джамбр» Симеона Ереванци как первоисточник по истории взаимоотношений католикосатов С. Эчмиадзина и Гандзасара, - В статье изучены те сведения «Джамбра» Симеона Ереванци, которые посвящены взаимоотношениям Католикосата всех армян (св. Эчмиадзина) и Католикосата Агванк (Гандзасарский престол). Изучены основные этапы взаимоотношений, их развития и особенности, их связь с теми политическими реалиями, которые имели место во времена персидского владычества. «Джамбр» Симеона Ереванци предостав-

¹ Դիան հայրց պատմութեան, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Գիրք Գ., Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով, Թիֆլիս, 1894, էջ 333-346 (այսուհետև՝ Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը):

² Ջամբռ, էջ 89:

³ Տէ՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թ. 240, վավ. 26, 29 և այլ:

⁴ Ջամբռ, էջ 90:

⁵ Տէ՛ս Ջամբռ, էջ 90:

⁶ Տէ՛ս Ջամբռ, էջ 91:

⁷ Տէ՛ս Մաղաթիա արք. Օրմանեան, Ազգապատում, էջ 3529:

ляет большое количество сведений, которые являются важнейшими перво-источниками по изучению взаимоотношений двух Армянских католикосатов. Предоставляя подробные сведения о Гандзасарском католикосате, Симеон Ереванци намеревался утвердить традиционное верховенство св. Эчмиадзина.

Hrant Ohanyan, “Jambr” of Simeon Yerevantsi as a Source of History of the Relations between Etchmiadzin and Gandzasar Catholicosates, – The article is devoted to the examination of the information of “Jambr” of Simeon Yerevantsi, which refers to the relationships between the Catholicosate of All Armenians (Mother See of Holy Etchmiadzin) and the Catholicosate of Aghvank (Holy See of Gandzasar). The basic problem is presented, its development and its peculiarities, especially in connection with the political conditions encountered during the Persian domination.

“Jambr” of Simeon Yerevantsi contains a large amount of factual materials which are the most important source for the study of the history of the two Catholicosates’ relations. Author, by referring to the Catholicosate of Gandzasar in detail, has aimed to substantiate the traditional supremacy of the Mother See of Holy Echmiadzin towards that Catholicosate.

Հրանտ Օհանյան - Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ:

